ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՅՍՈՒՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐՈՎ ՎԵՐՑՎԱԾ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ԲԵՆԶԻՆԻ ՓՈՐՁԱՆՄՈՒՇԻ ՈՐՈՇՎԱԾ ՕԿՏԱՆԱՅԻՆ ԹՎԻ ԴՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ ՀԻՄՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԻՍԿ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԴԵՊՔՈՒՄ ՎԵՐՑՎԱԾ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ԲԵՆԶԻՆԻ ՓՈՐՁԱՆՄՈՒՇԸ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«24» հունիս 2025 թ. ք. Երևան

Հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի 7-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 08-ի N 1000-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված N 2 հավելվածի 7-րդ կետի 4-րդ ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց՝

Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից այսուհետ իրականացվող ստուգումներով տեսչական մարմնի նմուշառման,

լաբորատոր փորձարկումների և չափումների վարչությունում ստուգման ընթացքում վերցված ավտոմոբիլային բենզինի փորձանմուշի փորձարկման արդյունքում որոշված օկտանային թվի դրական արդյունքը ընդունել որպես հիմք, իսկ բացասական արդյունքի դեպքում որպես հիմք ընդունել փորձարկման նպատակով Հայաստանի Հանրապետությունում գործող հավատարմագրված փորձարկման լաբորատորիա հանձնված ավտոմոբիլային բենզինի փորձանմուշի փորձարկման արդյունքում որոշված օկտանային թիվը և այն համարել վերջնական:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ